

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՉԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՂՐԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. ՍՈՒԿԱՐՅԱՆ

Հայերենի և զերմաներենի գոյականի ձևափոխությունները հետաքրքիր դրսևորումներ են ստանում սեռական հոլովների կազմության ժամանակ, որի զուգադրական քննությունը կօգնի ի հայտ բերելու ցեղակից լեզուների առնչակցությունն ու տարբերությունները: Դրանց իմացությունը հատկապես կարևոր է հայերեն-զերմաներեն և զերմաներեն-հայերեն թարգմանությունների ժամանակ՝ իմաստային նրբերանգները ճիշտ ընկալելու առումով:

Ժամանակակից հայերենի գոյականները, ինչպես հայտնի է, հոլովվում են արտաքին և ներքին թեքման հոլովումներով՝ վերջավորության ավելացման, վերջնահնչյունի կամ բառի ներսում կատարվող հնչյունափոխության միջոցով կազմելով սեռականի տարբեր ձևեր: Ձևերի այս բազմազանությունը մի կողմից վկայում է հայերենի սեռականի կազմության հարուստ միջոցների մասին, մյուս կողմից, սակայն, նկատվում է, որ առանձին հոլովիչներ ընդգրկում են տարբեր քանակի հոլովվող բառեր կամ բառախմբեր, որտեղից էլ բխում է նրանց գրաված դիրքը հոլովման համակարգում: Այս տեսակետից ի արտաքին հոլովումը, որին ենթարկվում են գոյականների ճնշող մեծամասնությունը և գոյականաբար գործածվող բառերը, ամենագործածականն է:

Ի հոլովման գործածության շրջանակներն ընդլայնվում են նաև մյուս հոլովումներից ենթարկվող բառերի զգալի մասի զուգաձևերի կազմությամբ, այսինքն՝ արտաքին և ներքին հոլովման մյուս հոլովիչներից պատկանող գոյականների որոշ խմբեր զուգահեռաբար կազմում են նաև ի հոլովիչով ձևեր:

Պ. Զահուկյանը նշում է. «Սեռական-տրականի թեքույթները համարժեք են ու զտնդվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, այսինքն՝ մեկի հնարավոր փոխարինումը մյուսով հոլովական իմաստի փոփոխություն չի առաջացնում»:

Այսպիսով, լինելով ժամանակակից հայերենի ամենածավալուն հոլովումը, ի հոլովումը իրականացնում է նաև մյուս հոլովումների հնարավոր փոխարինումը՝ դրսևորելով իր ոլորտին ոչ բնորոշ առանձնահատկություններ, որի համար էլ կոչվում է ընդհանրական կամ հասարակ հոլովում:

Հոգնակի թվում ի հոլովման են ենթարկվում եր, ներ մասնիկներով հոգնակին կազմող մյուս հոլովումներից պատկանող բառերը, հետևաբար ի հոլովումը հոլովվող բառերի ընդհանուր ցանկում գերիշխող դիրք է գրավում:

Չերմաներենի սեռական հոլովի կազմությունը պատկերելու համար պետք է ուշադրություն դարձնել գոյականի քերականական սեռի առանձնահատկությանը, որով պայմանավորված են հոլովման տեսակները: Ըստ քերականական սեռի՝ գոյականները կազմում են համապատասխան խմբեր և կանոնակարգված ձևով, չնչին բացառություններով, ենթարկվում են ուժեղ, թույլ կամ իզակական հոլովման: Ուրեմն՝ հոլովման տարատեսակությունը պայմանավորված է քերականական սեռով՝ ի տարբերություն հայերենի գոյականի, որը, չունենալով քերականական սեռ, տարբեր խմբեր է կազմում ելնելով բառերի միայն ձևային, իմաստային և պատմական առանձնահատկություններից:

Ե՛վ հայերենի, և՛ զերմաներենի գոյականները վերոհիշյալ հիմունքներով կազմում են բառախմբեր՝ հոլովվելիս ենթարկվելով տվյալ լեզվում գործող կանոններին: Հայերենի արտաքին և ներքին հոլովումները նույնպես դիտվում են հոլովման տեսակներ, իսկ

¹ Տե՛ս Պ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Եր., 1967, էջ 60:

հոլովիչները՝ ձևեր: Այս դեպքում հայերենի արտաքին հոլովումները կարող ենք համեմատության մեջ քննարկել գերմաներենի գոյականների հետ, իսկ ներքին հոլովումները, որոնք առանձնապես մեծ թվով բառեր չեն ընդգրկում, բնորոշ չեն գերմաներենին: Գերմաներենի գոյականը ներքին հնչյունափոխության է ենթարկվում՝ հոգնակի թվի կազմության ժամանակ: Գերմաներենի գոյականի քերականական սեռը՝ արական, իգական, չեզոք, արտահայտվում է համապատասխանաբար der, die, das հոդերի միջոցով: Եվ այս սեռերի գոյականների խմբերից ուժեղ հոլովմամբ հոլովվում են արական սեռի գոյականների մեծ մասը և չեզոք սեռի գոյականները՝ բացառությամբ «փրտ» բառի: Ուժեղ հոլովման գոյականներին բնորոշ է սեռականում **-(e)s** վերջավորությունը:

Kasus	Maskulina		Neutra	
Nominativ	der Baum	der Dreher	das Dorf	das Diktat
Genitiv	des Baum(e)s	des Drehers	des Dorf(e)s	des Diktats

Սակայն սեռականի ձևավորումը միայն **-(e)s**-ով չի սահմանափակվում: Քերականական սեռի հետ կապված՝ սեռականի ձևավորմանը ակտիվ մասնակցություն է ունենում նաև հոդը, որը հաճախ, երբ գոյականը հոլովական վերջավորություն չի ստանում, ինքն է ստանձնում հոլովական իմաստի արտահայտությունը, իսկ նշված օրինակներում կարելի է նկատել, որ սեռականի կազմությանը մասնակցել են գոյականն ու նրա սեռն արտահայտող հոդը միասին. իրոք որ «ուժեղ հոլովում» բառակապակցությունն իր արտահայտությունն է գտել սեռական հոլովում: Ուժեղ հոլովումը, ընդգրկելով գերմաներենի արական սեռի գոյականների մեծ մասը և չեզոք սեռի գոյականները, կարելի է ասել, որ ընդգրկում է բառապաշարի գոյականների մեծ մասը, հետևաբար ամենակենսունակ հոլովումն է:

Թույլ հոլովման գոյականները, սկսած սեռականից և հաջորդ հոլովներում, ստանում են **-(e)n** վերջավորությունը: Ժամանակակից գերմաներենում թույլ հոլովմամբ հոլովվում են միայն արական սեռի գոյականների մի քանի փոքրիկ խմբեր: Եզակի թվի սեռականի, ինչպես նաև մյուս թեք հոլովների **-en** վերջավորությունները միայն պայմանականորեն կարելի է անվանել հոլովական վերջավորություններ:

Իգական հոլովման գոյականներին բնորոշ է հոլովական վերջավորությունների բացակայությունը բոլոր թեք հոլովներում:

Արական սեռի **-e**-ով վերջացող մի քանի գոյականներ ցուցաբերում են թույլ և ուժեղ հոլովման հատկանիշներ: Նրանք սեռականում ստանում են **և՛ -n, և՛ -s, և -ns** վերջավորություններ՝ դրսևորելով երկու հոլովումներին բնորոշ փոփոխությունները միասին: Այս շեղումները առկա են նաև հայերենի հոլովական համակարգում, որտեղ մի քանի գոյականների սեռականի ձևերը հնացել են և սեռականը կազմում են ի հոլովիչով, որոշ բառեր շարունակում են հոլովվել այլաձև հոլովմամբ: Ա ձևությամբ հնաբանությունները՝ բաղադրյալ աշխարհագրական անունների սեռական-տրականի քարացած ձևերը, անձնանունների ա-ով սեռականը, որոնք գրաբարից են պահպանվել, վկայում են, որ լեզուն շարունակաբար զարգանում է, և այդ ընթացքում որոշ ձևեր կարող են հնանալ և դուրս մղվել:

Այսպիսի փոփոխությունները բնորոշ են հատկապես ցեղակից լեզուներին: Ուստի, ինչպես օրինաչափ են համարվում հայերենի հոլովական համակարգում պահպանված այլաձև հոլովումները, այնպես էլ գերմաներենի առանձնակի կամ մասնավոր՝ կանոնականից շեղվող հոլովման տեսակները: Սեռական հոլովի կազմության զուգադրական քննություն կատարելու համար պատկերենք հայերենի սեռականի կազմության ձևերը:

Եզակի թիվ										
Արտաքին և ներքին հոլովումներ							գուգայնություններ			
ուղղ.	սար	որդի	չարժում	օր	քույր	հայր	միության	միավորում	ընկեր	ծյուն
սեռ.	սարի	որդու	չարժման	օրվա	քրոջ	հոր	միության	ան, ի	ոչ, ի	ան, ի

Հնարանություններ

<i>ոտղ.</i>	փախուստ	հույս	Վան	Տրդատ	աղջիկ	սեր
<i>սեռ.</i>	յան, ի	ո, ի	Վանա լիճ	ա	աղջկա	սիրո

Արտաքին և ներքին, ինչպես նաև -յան և -ո հոլովիչներով հոլովման գուգաճեռ ձևերը պատկերում են Ի հոլովման տիրապետող դիրքը:

Հոլովական ձևերի փոփոխությունները, անցումները, պայմանավորված լեզվի զարգացմամբ, շարունակ հղկում, մաքրում են լեզուն ավելորդ ծանրաբեռնվածությունից, տարբերությամբ կազմություններից, ոչ գործածական ձևերից, ստեղծում միասնական տեսակ:

Մ. Աբեղյանը նշում է. «Այս նույնացման հետևանքն այն է լինում սովորաբար, որ մի հոլովական խումբ բառեր անցնում են ուրիշ հոլովական խմբի մեջ, այն էլ բոլորը կամ դրանց մի մասը, կամ բոլոր ձևերի մեջ կամ մի քանիսի մեջ»⁴:

Եթե համեմատենք արտաքին և ներքին հոլովումների եզակի և հոգնակի թվերում ընդգրկած բառաքանակը, ապա կնկատենք, որ ներքին հոլովմամբ հոլովվում են անհամեմատ քիչ թվով գոյականներ: Այդ իսկ պատճառով կարելի է պնդել, որ Ռայերենի գոյականը, իրոք, արտաքին հոլովման միտում ունի:

Համեմատելու համար ներկայացնենք նաև գերմաներենի սեռական հոլովի կազմության պատկերը.

Singular						
	Starke Deklination		Schwache Deklination	Die Deklination der Feminina	Sonderfall	
Kasus	Maskulina	Neutra	Maskulina	Feminina	Maskulina	Neutra
Nom.	der Baum	Diktat	der Junge	die Frau	der Name	das Herz
Gen.	des Baumes	Diktats	des Jungen	der Frau	des Namens	des Herzens

Plural		
Kasus	Ausnahme	
Nom.	die Tische	Klubs
Gen.	der Tische	Klubs

Գերմաներենի գոյականը ընդհանրապես չունի ներքին թեքում և բերված օրինակներում եզակի սեռականը ձևավորվել է վերջավորությամբ և հողով: Չնայած թեք հոլովաձևերը, սկսած սեռականից, վերջավորություններից աղքատ են, սակայն միևնույն է, նրանց առկայությունը էական դեր չի կատարում հոլովական իմաստն արտահայտելու գործում: Այն արտահայտվում է հողի հոլովված ձևի միջոցով: Հողին մեծ դեր է վերապահվում գերմաներենի հոլովական համակարգում ընդհանրապես: Իսկ իգական սեռի գոյականները եզակի սեռականում, ինչպես նաև բոլոր գոյականները հոգնակի սեռականում վերջավորություն չեն ստանում, և սեռականի իմաստն արտահայտվում է հողի հոլովված ձևով:

Այսպիսով, հոլովվող հողը, կապակցվելով գոյական անվանը, կրճատում և նվազագույնի է հասցնում հոլովական համանունությունը ոչ միայն ուղիղ և առաջին թեք հոլովներում, այլև ամբողջ համակարգում:

Իգական հոլովման դեպքում, ինչպես նշված է գծապատկերում, սեռական հոլովի միակ ցուցանիշը հողի հոլովված ձևն է: Չնայած թույլ հոլովման գոյականները վերջավորություն են ստանում, իսկ իգական հոլովման ենթարկվողները՝ ոչ, այնուամենայնիվ երկու դեպքում էլ հոլովական իմաստն արտահայտվում է հոլովված հողի միջոցով:

⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1974, էջ 279:

Գերմաներենի գոյականի թույլ հոլովումը արտաքին հոլովում է համարվում, որովհետև գոյականը ստանում է վերջավորություն, որով, սակայն, սուկ կազմվում է վերջավոր ձև առանց տվյալ հոլովի իմաստի արտահայտության:

Համեմատելով հայերենի և գերմաներենի գոյականների հոլովման տեսակներն ու ձևերը՝ գտնում ենք, որ երկու լեզուներում էլ հիմնականում գործում են արտաքին հոլովումները, իսկ սեռականի կազմության ձևերը պայմանավորված են քերականական անանձնահատկություններով:

Հայերենի գոյականը, չունենալով քերականական սեռ, ինչպես նշվել է, սեռականը կազմում է վերջավորությունների կամ ներքին հնչյունափոխության միջոցով, իսկ գերմաներենի թույլ և իգական հոլովման գոյականների սեռական, ինչպես նաև մյուս հոլովների ձևերի արտահայտությունը ստանձնում է հողը:

Քանիցս նշվել է, որ ի արտաքին հոլովմամբ ավելի մեծ թվով գոյականներ են հոլովվում: Համեմատության մեջ քննելով գերմաներենի գոյականների հոլովման տեսակները՝ հանգում ենք այն հետևության, որ ուժեղ հոլովմամբ հոլովվում են ավելի շատ գոյականներ, որ այն ամենակալում և արդյունավետ հոլովման տեսակ է: Ամենայն հավանականությամբ հայերենի ի արտաքին և գերմաներենի ուժեղ հոլովումները ամենազանգվածալիցն ու ամենակենսունակն են:

Փորձենք համեմատել գերմաներենի հասարակ և հատուկ գոյականների սեռականի այն ձևերը, որոնք հոլովական վերջավորություն են ստանում, այսինքն՝ ուժեղ և թույլ հոլովումները: Ուժեղ և թույլ հոլովման սեռականի վերջավորությունները գործածելիս նշվել ենք նաև բառի վերջնահնչյունի և հոլովական վերջավորության միջև որոշ դեպքերում կիրառվող -e-ի մասին: Սեռականում -e ստանում են մեծ մասամբ z, x, s, β շջական բաղաձայնները, pf տառակապակցությամբ ավարտվող, ինչպես նաև միավանկ արմատում շատ բաղաձայններ ունեցող բառերը: Արմատի և հոլովական վերջավորության s, n, ns բաղաձայնները -e ձայնավորը կապում է միմյանց և նպաստում բարեհունչ և սահուն արտասանությանը:

Nom.	der Blitz	der Präfix	der Kreis	der Fuß	der Pilz
Gen.	des Blitzes	des Präfixes	des Kreises	des Fußes	des Pilzes

Սեռականում -e-ի կապող դերը թույլ հոլովման գոյականների սեռականը կազմելիս փոքր է, որովհետև այդ հոլովման բառերի մի մասը արմատում e ունի՝ der Affe, der Bote, der Bude..., հետևաբար անիմաստ է նոր ներույթի գործածությունը. մյուսը ընդգրկում է այնպիսի բառախումբ, որի կազմում ընդգրկված արական սեռի գոյականները նախկինում ունեցել են e վերջնահնչյունը, և սեռականի կազմության ժամանակ այն վերականգնվում է. օր.՝ der Bär- des Bären, der Fürst- des Fürsten, der Mensch- des Menschen.

Օտար ծագում ունեցող ածանցավոր և անշունչ առարկաներ ցույց տվող բառերը սեռականը կազմում են -en-ով: Օր.՝ der Aktivist- des Aktivisten, der Pädagog- des Pädagogen, der Automat- des Automaten.

Եթե, ինչպես նշում է Մ. Աբեդյանը, հնդեվրոպական ծագում ունեցող ei տառակապակցությունը՝ բաղկացած b+θ -ից, դարձել է օ, հետադարձ հայացքով ուսումնասիրելիս կարելի է ենթադրել՝ ելնելով բերված օրինակներից, որ θ ձայնակապը՝ որպես ներույթ, ներմուծվող կապող միջոց, գործածվում է հայերենի Ա և Ո կից ձայնավորների միջև: Հավանական է, քանի որ θ-ն կիսաձայն է, որքանով որ այն դիտվում է ձայնավոր, նույնքանով էլ բաղաձայն է: Ուրեմն՝ տրամաբանական է նրա ներմուծումը որպես ձայնավորներից կապող միջոցի՝ ձայնակապի:

Գերմաներենում e ձայնավորը, որը որպես կապող միջոց հանդես է գալիս բաղաձայնների միջև, նույնպես կարելի է դիտել իբրև ներույթ, որն իրականում բառին ոչ մի իմաստ չի հաղորդում, այլ կապվող բաղաձայնների բազմության մեջ իր առկայությամբ մեղմում և արտահայտիչ է դարձնում հնչյունը՝ խուսափելով անհաճո կարճ տևողությունից: Օչական բաղաձայններից կամ արմատի մի քանի իրար հաջորդող բաղաձայններից հետո առանց e ներույթի նոր բաղաձայնի՝ հոլովական վերջավորության ավելացման դեպքում նույնիսկ բառային շեշտը, որն, ի դեպ, գերմաներենում նախադաս է, հնարավոր

չի լինի ճիշտ տեղում հնչեցնել, որտեղից էլ՝ բառի՝ տվյալ լեզվին ոչ բնորոշ, ոչ գեղեցիկ առոգանությամբ արտասանությունը:

Համեմատելով հայերենի Յ ձայնակապը և գերմաներենի e ձայնավորը՝ կարծում ենք, որ նրանք նույն կապակցող միջոցի բաղադրիչներ են, եթե ոչ նույնը, որոնք դարերի ընթացքում պահպանել են իրենց կատարած դերի ընդհանրությունը: Հայերենում ունենք գրաբարից եկող որոշ ձայնավորների կապակցություն, գերմաներենում՝ դարձյալ կապակցություն, սակայն բաղաձայնների:

Հասարակ անունների հոլովման հետ կապված հայերենի և գերմաներենի սեռակա-
նի կազմության ձևերը քննարկելիս հանգեցինք որոշ հետևությունների, որոնք վկայում են այս լեզուների հնագույն և ցեղակից առնչությունների մասին:

Գերմաներենի սեռականի ձևերի կազմության մեջ հատուկ անունների հոլովումը, ի տարբերություն հայերենի, տարբերվում է հասարակից: Հայերենում հատուկ անունները հոլովվում են համապատասխան արտաքին հոլովումներով: Անձնանունների և քաղաք-ների անունների մի փոքրիկ խումբ ունի սեռականի կազմության մի քանի ձև՝ զուգաձևու-թյուն: Օր.՝ Գարիբալդի-Գարիբալդիի-Գարիբալդու, Լոռի-Լոռու-Լոռվա-Լոռիի, Բաֆֆի-Բաֆֆիի-Բաֆֆու, Օուշի- Օուշիի- Օուշվա, Գյումրի- Գյումրիի-Գյումրվա:

Այսպիսով, սեռականի զուգաձևությունները ունեն կիրառության իմաստային և ոճա-կան տարբեր շրջանակներ և նրանց զուգահեռ գործածությունը պահպանում է գրական ժողովրդական-խոսակցական լեզվի կապը:

Հայերենի հատուկ անունները, չնչին բացառությամբ, ենթարկվում են -ի հոլովման: Չնայած գերմաներենում գոյականները գործածվում են հոդով, սակայն անձնանունները՝ անուն-ազգանունները, մեծ մասամբ գործածվում են առանց հոդի և միայն սեռական հո-լովում ստանում են -s վերջավորությունը: Հատուկ անունների հոլովումը գերմաներենում շեղվում է մնացած գոյականների հոլովումից, իսկ սեռականի -s վերջավորությունը հա-մապատասխանում է հայերենի Ի հոլովիչին:

Օրինակ՝ Erwin - Erwins, Liven-Livens, Lenore-Lenores
Էրվին-Էրվինի, Լիվեն-Լիվենի, Լենորե-Լենորեի

Գերմաներենի արական սեռի՝ s, β, x, z շչական հնչյուններով ավարտվող անձնա-
նունները սեռական հոլովը կազմում են - ens վերջավորությամբ կամ բառի ուղիղ ձևով և
von կապով:

1. Hansens Bücher	Հանսի գրքերը
2. Marxens Freund	Մարքսի ընկերը
3. Die Werke von Marx	Մարքսի նրկերը

Հայերենի օրինակներում սեռականը նույնատիպ կազմություն ունի և արտահայ-տում է առարկաների հարաբերություն: Հանսի գրքերը կարելի է կարծել Հանսի գնած գրքերը, Հանսի՝ գրադարանից քերած գրքերը, Հանսի հեղինակած և հրատարակած գրքերը, Հանսի՝ որպես հրատարակչի կամ ձևավորողի գրքերը և այլն: Մարքսի ընկերը կապակցության շուրջ նույնպես կարելի է մտադատել դատողություններ անել: Սակայն 3-րդ օրինակը, որը կազմությամբ չի տարբերվում նախորդներից, արտահայտում է ծագ-ման իմաստ, որ երկերը ստեղծել է Մարքսը:

Գերմաներենի 3-րդ օրինակում՝ կապով և ուղղականով կազմված ձևում նույնպես
արտահայտվում է սեռականի ծագման իմաստը, բայց այս ձևը կազմությամբ շեղվում է
սեռականից:

Von կապի միջոցով ձևավորվում է նաև վերոնշյալ հնչյուններով ավարտվող քա-
ղաքների և փողոցների հատուկ անունների սեռականի իմաստը:

Օրինակ՝ Փարիզի, Մայնցի, Բիլի փողոցները:
Die Straßen von Paris, Mainz, Kiel.

Սեռականի ձևերի բազմազանությունը հայերենում և գերմաներենում հաստատում է
լեզուների անսպառ հնարավորությունն ու ճկունությունը առարկաների քերականական
հարաբերություններն արտահայտելու համար:

Գերմաներենում սեռականի նույն իմաստը կարելի է արտահայտել տարբեր ձևերով:
Օրինակ՝ «Կարլ Բրենտենի ինքնագիտակցությունը» կապակցության իմաստն արտահայ-
տելու համար գերմաներենում կարելի է գործածել հետևյալ ձևերը՝

1. Carl Brentens Selbstbewußtsein.
2. Das Selbstbewußtsein Carl Brentens.
3. Das Selbstbewußtsein von Carl Brenten.

Հայերենում, ինչպես գերմաներենում, բաղադրյալ հատուկ անուններից միայն վերջինն է ստանում սեռականի վերջավորությունը:

Օրինակ՝ Հովհաննես Թումանյանի պոեմները - Die Poeme Hovhannes Tumanjans = Hovhannes Tumanjans Poeme.

Կապով գործածվող ազգանունները գերմաներենում, ի տարբերություն պարզ հատուկ անունների, որպես կանոն հոլովվում են՝ die Opern Carl Maria von Webers- Կարլ Մարիա Վեբերի օպերաները: Von կապով և սեռականի -s վերջավորությամբ ազգանունը հայերենում ունի սեռականի ի վերջավորությունը:

Ժամանակակից գերմաներենում անձնանունները, ինչպես նաև ամիսների և շաբաթվա օրերի անվանումները որոշ բառակապակցություններում մեծ մասամբ հոլովական վերջավորություն չեն ստանում, եթե հոլովի իմաստն արտահայտվում է որոշից անաչ գործածված հոդով՝ die Gedichte des jungen Goethe-երիտասարդ Գյոթեի բանաստեղծությունները, die Feier des Ersten Mai-Մայիսի մեկի տոնը: Իսկ հայերեն օրինակներում, քանի որ բացակայում է հոլովական իմաստն արտահայտող հոդը, անձնանունը և ամսանունը ստանում են սեռականի վերջավորություն:

Գերմաներենում եթե հատուկ անունը մասնագիտությունը, կոչումը մասնագնշող գոյական որոշի հետ կազմում է բառակապակցություն, հոլովական վերջավորություն որոշյալ հոդի պարագայում ստանում է գոյական որոշիչը: Օրինակ՝ die Werke des berühmten deutschen Dichters Goethe: Իսկ հայերենում՝ գերմանացի նշանավոր բանաստեղծ Գյոթեի ստեղծագործությունները: Հայերենում գերմաներենի որոշյալ հոդով կապակցությունը նույնանում է հոդի բացակայությամբ կազմված կապակցության հետ, այսինքն՝ հոլովվում է կապակցության հատուկ անունը միայն՝ die Werke Professor Timirjasews կամ Professor Timirjasews Werke: Երկու նախադասություններն էլ հայերենում պրոֆեսոր Տիմիրյազևի աշխատությունները ձևով են գործածվում: Հայերենում գոյական որոշիչը չի կարող սեռականի վերջավորություն ստանալ, որովհետև գոյականը չունի հոդ:

Երկրների և քաղաքների չեզոք սեռին պատկանող հատուկ անունները սովորաբար գործածվում են առանց հոդի և սեռականում ստանում են հոլովական -s վերջավորությունը:

1. Բեռլինի շրջակայքը: Die Umgebung Berlins=Berlins Umgebung.
2. Մոսկվայի փողոցները: Die Straßen Moskaus=Moskaus Straßen.
3. Գերմանիայի գետերը: Die Flüsse Deutschlands=Deutschlands Flüsse.

Նշված հայերեն բառակապակցություններում սեռականով գործածված գոյական-վերադիրները դրված են կապակցության սկզբում: Գերմաներենում սեռականի ձևը ուղղականին նախորդելու դեպքում ուղղականը գործածվում է առանց հոդի, իսկ եթե սեռականը Քաջորդում է ուղղականին, վերջինս գործածվում է հոդով:

Այսպիսով, հայերենը, լինելով հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ, ցեղակից է գերմանական ճյուղի մեջ մտնող լեզուներին: Եվ չնայած ժամանակի և տարածության մեջ նրանք հեռացել են նախալեզվից և զարգացել ուրույն ձևով՝ դրսևորելով ինքնատիպություն, բայցևայնպես պահպանել են նաև ընդհանրություններ:

A. С. СУВАРЯН - Сравнительный анализ родительного падежа современно-го армянского и немецкого языков. - В статье рассматриваются принципы и особенности строения родительного падежа в современном армянском и немецком языках, выделяются и анализируются наиболее эффективные типы склонения. Армянский и немецкий, являясь родственными языками индоевропейского языкового семейства, хотя со временем и удалялись от праязыка, проявляя своеобразие, однако сохранили и черты общности. В частности в обоих языках имеется множество разновидностей родительного падежа, анализ которых выявил и сближения, и расхождения.